Վերոյիշեալ ցանկին մէջ անուանեալ երկրորդ երկիրն՝ Խուբինէ՝ անծանօթ է մեզ. բայց անոր հաւանական տեղը Հայաստանի այն մասն է՝ որ տակաւին այսօր ալ բոլորովին անծանօթ է և չէ քննուած։

Երրորդ երկիրն է Անղախթ, ուր տանց աշխատութեան Պաղոմէոս Ցոյն պատմագրին (Դիրք Ն. գլ. 13—Ց. 18) յիշած Անչէքէնէ գաւառն և Հայ աշխարհագրաց Հանձիթ գաւառը կը հասկցուի Եփրատայ և Վերին Տիգրիսի մէջ տեղը։

Արկխոթի Թագաւորն իր երկրակալութիւնը մինչև Խոզաբօզճէլու քաղաքը քշեց։ Այս անունը բարդ է. ճէլու կամ ճէրբ կրնայ նշանակել քաղաք կամ (կերտ) կերտուած *)։ Ուրեմն կը նշանակէ Խոզաբիսի քաղաք կամ կերտուած. Խոզաբիս շատ կը նմանի Եփրատայ Ասորերէն անուանը. բայց առանց սոր կարևորութիւն տալու՝ կրնայ աւելի հաւանականաբար այս անունով մարդ մը նշանակել։ Բայց ինչ որ ալ ըլլայ, Հայերէն Պալահովիտ անուան կը պատասխանէ. վասն զի ւ և ր գրերը Հայերէնի մէջ թէ այն ժամանակ և թէ այսօր ըծորդ են, և իրարու տեղ կը գործածուին. Ուստի տարակոյս չկայ որ արդի Բալու քաղաքն այս գաւառին յիշատակը կը պահէ մինչև այսօր։

Հետևեալ անունն ալ Թիւրիւրիւրա ճշդիւ հայ պատմագրաց և աշխարհագրաց յիշած Տուրուբերան գաւառին անունն է, որ Վանայ ծովակին և Պինկէօլ լերան մէջ տեղը կիյնայ, յորմէ կ'աղացուցանի թէ Արկխոթի Թագաւորը Բալուի տիրելէ ետև՝ Վերին Եփրատայ աջ եզերէն ետ դարձած է։

Հետևեալ անունները կրճատ են և բաղդատութեան ապահով հիմ մը չեն ընծայեր. բայց և այնպէս կրնայ ենթադրուիլ թէ կրճատեալ Քիւրա . . . անունը Հարք կամ Խորխոռունիք նահանգները նշանակէ, որոց երկուքն ալ Տուրուբերան գաւառին մէջ են։

Հոս կաւարտենք մեր յօդուածը, բայց յիշուած օրինակները կը հաստատեն թէ հնոց մնացած շէնքերն և հին պատմագրաց վկայութիւնները զիրար կը բացատրեն. բայց կը հաստատեն նաև թէ աւելի կատարելապէս հասկցուելու համար պէտք է որ Հայաստանի երկիրը մինչև հիմա եղածէն աւելի կատարեալ և աւելի ճիշդ կերպով քննուի։

Ա. Տ. ՄՈՐԴՄԱՆ.

Մօսիս, թ. 1472, Դեկտեմ. 8։

(*) Վերջինն առաւել ճիշդ է։ Ծ. Խ.

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Տիրապետութիւնը գործունեայ եւ զարգացած մարքին է պատկանում։

—

Ազգային տարրերից ամենահզօրը եւ կենդանականը լեզուն է։

**Մ. Մ.** Միանսարեանց տպագրութիւններին գինը Տիփլիս (Tiflis) նորա սեփհական տանը, հայոց Վանքի Մեծ և Փոքր փողոցների անկիւնում, Մայր եկեղեցւոյ հանդէպ, Ս. Պետերբուրգէ իր կացարանում, այսպիսի հասցէով։

Въ С. Петербургѣ, на Михайловской площади, домъ № 2—3, Жербина, кв. № 5, Михаилу Месроповичу Міансарову, – Russie, S. Pétérsbourg, place Michel, maison № 2—3, de Cerbinne, log. № 5, Michel Miansarof (Miansariantz) – Ս. Պետերբուրգէն (ոչ Տիփլիսէն) Ռուսաց տէրութեան ամենայն քաղաքները առաքելով, ճանապարհի (փոստայի) ծախսով հանդերձ, Կ. Պօլիս գրավաճառ Քրիստիան Րօթի մօտ, Պէրա, Հազզօպուլօյի անց (պասաժ), № 32, – Christian Roth, librairie étrangère, Constantinople, Grand Rue de Pèra, Passage Hazzopulo, № 32, և միւս Հայ գրավաճառների մօտ։

Քնար Հայկական ընդարձակ երգարան հանդերձ գանազան յաւելուածներով, ծանօթութիւններով և Հայախօս առածներով (Lyre arménienne— recueil des chants)։ Ս. Պետերբուրգ, 1868, 8 ծալ, էջ 712, Հայկական Քնարի յաւելուածը առանձին տպած 1870 թ., 8 ծալ, էջ 32, երկուսը միասին.

մի օրինակ 1 ռ. 30 կ. Օսմ. 7 Փր.

հինգ օրին. 5 ռ. — ״ 30 Փր.

Խնամատարութիւն երեխայոց (Komb, — éducation des enfants). — մարմնական և բարոյական, շարա-

գրութիւն Կօմբ'ի, Անգղիացւոց թագուհու բժշկի, հանգիրձ զանազան յաւելուածներով տպագրողի կողմից Պետերբուրգ 1868 թ., 8-ածալ, էջ 300.

մի օրինակ 80 կ. Օսմ. 4 Փր
հինգ օրի. 3 ռ. 50 կ ,, 14 Փր.

Եղուարդ Լաբուլէի. Ազգային կրթութիւն. (Լաբուլէի գիրքը Պետերբուրգ սպառած է, Տփղիս կան մօտ հարիւր քանի օրինակ). ա) ինքնակրթութիւն, բ) ազգային կրթութիւն, գ) ժողովրդական գրատուններ. Պետերբուրգ 1867 թ., 8-ծալ, էջ 108. հանգիրձ յաւելուածներով տպագրողի կողմից.

մի օրինակ 40 կ. Օսմ. 2 Փր.
հինգ օրի. 1 ռ. 50 կ. ,, 6 Փր.

Կանոնաւոր և Վայելուչ Գրութեան Պատմութիւնը և տեսութիւնը (l'histoire et la théorie de la calligraphie) հանգերձ զանազան ծանօթութիւններով, յաւելուածներով և գրասեղանների ու անատոմիկական ստուերագրերով. Ս. Պետերբուրգ 1872 թ., 8 ծալ, էջ 274.

մի օրինակ 1 ռ 20 կ Օսմ. 7 Փր.
հինգ օրի. 5 ռ. ,, 30 Փր.

Հայկական կանոնաւոր և վայելուչ գրութիւն (գաղափարներ, օրինակներ) սև մելանով տպած (calligraphie arménienne). Լէյպցիգ 1873 թ, 4-ծալ, 5 1/2 թերթ, էջ 24. հանգիրձ զանազան ստուերագրերով և պատկերներով.

մի օրինակը Տփղիս և Պետերբուրգ 40 կ. Օսմ. 2 Փր.
հինգ օրինակը Պետերբուրգէն ուղարկելով Ռուսիայի միւս քաղաքները 2. ռ. Օսմ. 8 Փր.

Հայերէն կանոնաւոր և վայելուչ գրութեան վարժութիւններ (Exercice de al calligraphie àrménienne) №№ 1. 2. 3. 4 և 5. գունաւոր մելանով տպած, որ գրել սովորել սկսողները կամ վատ գրողները, տպածի վերայ սև թանաքով գրելով, դիւրութեամբ (հեշտութեամբ) վարժուին կանոնաւոր և վայելուչ գրելու.

Վարժութիւն (exercice) № 1. սկզբնական խազեր, մեծ 4 ծալ, կէս թերթ, չորս երեսից բաղկացած.

հարիւր (100) օրինակը 2 ռ. Օսմ 8 Փր
հինգ (500) հարիւրը . . 10 ռ. Օսմ. 40 Փր.

Վարժութիւն (exercice) № 2. այբբենը և բառեր, մեծաձև, 4 ծալ երեք թերթ կամ 24 երես.

հարիւրը (100) 12 ռ. Օսմ. 48 Փ.
հինգ հարիւրը (500) 60 ռ. ,, 240 Փ.

Վարժութիւն (exercice) № 3. գլխագրերը մեծ և միջին ձև, 4-ծալ կէս թերթ, չորս երես.

հարիւր (100) օրինակը 2 ռ. Օսմ 8 Փ.
հինգ հարիւր (500) օրինակը 10 ռ. ,, 40 Փ.

Վարժութիւն (exercice) № 4. այբբենը և բառեր միջին ձևի մեծութեան տառերով, մի թերթ կամ 8 երես.

հարիւրը (100) 4 ռ. Օսմ 16 Փր.
հինգ հարիւրը (500) 20 ռ. ,, 80 Փր.

Վարժութիւն (exercice) № 5. առանձին պարբերութիւններ և փոքրիկ հատուածներ մանր տառերով տպած և թուանշաններ, կէս թերթ կամ չորս երես.

հարիւրը (100) 2. ռ. Օսմ. 8 Փր.
հինգ հարիւրը (500) 10 ռ. ,, 40 Փր.

Հայերէն կանոնաւոր և վայելուչ գրութեան տողացանցեր (transparent) №№ 1. 2. 3 և 4. գունաւոր կարմրագոյն հաստ մեծ թերթի վերայ, սև թանաքով տպած, չորս երես.

25 օրինակը 2 ռ. 50 կ. Օսմ. 10 Փր.
50 օրինակը 5 ռ. ,, 18 Փր.

Անմիջապէս հեղինակից, Պետերբուրգէն միանգամից քսան րուբլու վարժութիւններ գնել կամեցողները և դրամը կանխիկ վճարողները ամեն մի քսան րուբլու վարժութիւնների տեղ կստանան, իբրև զիջումն քսան և հինգ րուբլու վարժութիւններ, թողլով, մի և նոյն ժամանակ, ճանապարհի ծախսը (Ռուսիայի սահմաններում) հեղինակի վերայ։

Որովհետև Մայիսից մինչև Սեպտեմբեր ամիսները հեղինակին երբեմն պատահում է Պետերբուրգէն դուրս լինել, այս պատճառաւ վերոյիշեալ որ և իցէ տպագրութիւնները առաւել արագ ստանալ կամեցողները թո՛ղ բարեհաճին իւրեանց ցանկութիւնը —(և վերոյիշեալ տպագրութիւններին վերաբերեալ նկատութիւնները, տեղեկութիւնները կամ լուրերը, հեղինակի գիտենալու համար պիտանի) — առաւելապէս Օգոստոսից մինչև Մայիս ամիսները յայտնել։